Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գետարգելի հիմնական

Թեմա՝ Ուսուցիչների համագործակցությունը հովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ

կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում

Վերապատրաստող, մենթոր՝ Անուշ Ասատրյան

Ուսուցիչ՝ Հրաձին Մարտիրոսյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն — 3

Ուսուցիչ - ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության վրա — 4

Սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները — 6

Ծնողական ժողովների անցկացումն ու դրանց նպատակը — 7

Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա — 10

Ընտանիքի և դպրոցի փոխներգործությունն ու համագործակցությունը — 12

Ամփոփում — 15

Եզրակացություններ — 15

Օգտագործված գրականության ցանկ — 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացման հիմքում ընկած է կրթությունը: Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է: Երեխաների դաստիարակության և կրթության իրականացման գործընթացում մեծ դեր է կատարում ծնող-ուսուցիչ-դպրոց օղակը: Այդ տեսակետից բացարձակ անհրաժեշտություն է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև հաղորդակցման բարելավումը և նրանց իրական համագործակցության կառուցումը: Եթե մենք իսկապես ուզում ենք բավարարել մեր հասարակության կրթական կարիքները, անհրաժեշտ է սովորողների ծնողներին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ՝ ուսուցումն առավել ընդհանրական և արդյունավետ դարձնելու նպատակով:

Ցանկացած երեխա անհատականություն է: Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության ու հանդուրժողականության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել:

Ծնող - ուսուցիչ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման, կրթական նպատակների իրականացման և երեխաների կրթության առավել նպաստավոր պայմանների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալ է: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Հետազոտության նպատակը

Սույն հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է մատնանշել բոլոր այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ամրապնդել դպրոց-ծնող համագործակցությունը՝ նպատակ ունենալով նպաստել սովորողի ուսումնառության որակի բարձրացմանը:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Ուսուցիչ - ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության վրա

Ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի մասնակից են համարվում սովորողը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և ուսուցիչը: Ուսուցչը ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, ով մեծագույն պատասխանատվություն է կրում սովորողի չափորոշչային վերջնարդյունքներին հասնելու համար: Սակայն շատ կարևոր է նաև սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացին, ծնողի կողմից ուսուցչի հետ համագործակցելու, սովորողին վերահսկելու և առաջնորդելու գործառույթը:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են.

- Փոխադարձ հարգանքը ծնող-ուսուցիչ հարաբերություններում;
- Առողջ բարոյահոգեբանական միջավայրը;
- Ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը;
- Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը;
- Մշտադիտարկումը;

- Սխալների ընդունումը, վերլուծություն, թերի կողմերի արձանագրումը;
- Ինքնանդրադարձ կատարելու կարողությունը;
- Հումանիստական մղումները;
- Սեփական շահի ստորադասումը;
- Անձնային բարձր որակների դրսևորումը:

Ծնող-ուսուցիչ հաղորդակցությունը մեծ դեր է խաղում սովորողի կրթության որակի բարելավման համար, քանի որ ծնողներն ու ուսուցիչները հաղորդակցության ու համագործակցության ընթացքում միասին են սկսում հետազոտել սովորողի անձնային առանձնահատկությունները, ցանկություններն ու երազանքները, ինչը թույլ է տալիս նրանց ավելի խորքային ճանաչել սովորողին ու հաշվի նստել նրա պահանջմունքների հետ: Ուսուցիչը սովորողի ընտանիքը ճանաչում է հենց նրա աչքերով, ավելին սովորողի վարքը հաճախ ուսուցչի ներկայությանմբ կարող է տարբեր լինել, ուստի այս պարագայում մշտական կապը սովորողի ծնողի հետ թույլ կտա անուղղակի կերպով կառավարել սովորողին: Կարևոր է կողմերի միջև անվերապահ վստայիությունը: Ծնողի համար ուսուցչի ու դպրոցի հետ մշտական կապը շատ կարևոր է, քանի որ դա նրան թույլ է տալիս մշտապես տեղեկություն ստանալ իր երեխայի մասին՝ լինի դա ուսումնառության հետ կապված դժվարությունների, հասակակիցների հետ խնդիրների, վարքային շեղումների, թե կրթական ձեռքբերումների մասին: Սովորողի բնականոն զարգացման ու դաստիարակության գաղափարն է միավորում ծնողներին և ուսուցիչներին, ուստի համագործակցությունը պետք է ուղղված լինի հենց այդ գաղափարի բնականոն ու արդյունավետ իրականացմանը:

Ծնողների ներգրավվածությունը սովորողի դպրոցական կյանքին ոգևորիչ է նաև ուսուցչի համար, քանի որ դժվարությունների առաջացման ժամանակ, ուսուցրչը կարող է հույս դնել ծնողների օգնության վրա:

Ծնողը և ուսուցիչը պատասխանատվություն են կրում սովորողի կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները:

Ծնողների ներգրավվածությունը երեխայի դպրոցական կյանքին և ուսումնական գործընթացին իր մեջ ներառում է.

- դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն,
- երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում,
- դպրոցի համար խելամիտ ու հիմնավոր պահանջների նախանշում,
- ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և սովորողների առաջընթացի ու վարքային դրսևորումների քննարկում,
- տնային առաջադրանք կատարելիս սովորողին օգնության ցուցաբերում և ուղղորդում,
- ծնողական ժողովներին ակտիվ մասնակցություն
- գործունեություն ծնողական խորհրդում,
- այլ ծնողների հետ քաղաքավարի շփում, համագործակցություն:

Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողունակությունների անցնցում ձևավորմանը:

Սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի իրավունքներն ու պարտավորությունները սահմանված են օրենքով:

Սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները

Հայաստանի Հանրապետության օրենքը հանրակրթության մասին

1. Սովորողի ծնողն իրավունք ունի՝

1) երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը և կրթության ձևը.
2) համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով.
3) դիմելու համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերով.
4) պաշտպանելու իր և իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում.

5) մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետության գնահատման գործընթացին.
6) մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը.
7) մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Սովորողի ծնողն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2. Սովորողի ծնողը պարտավոր է՝

1) Երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար.
2) Մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար.
3) Հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ.
4) Դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ.
5) Դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ.
6) Սույն օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն.
7) Հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը.
8) Սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց:

Ծնողական ժողովների անցկացումն ու դրանց նպատակը

Դասարանական ծնողական ժողովները ծնողների և դպրոցի համագործակցության գլխավոր ձևերից են: Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա

այն հարթակն է, որտեղ թե' ուսուցիչը, թե սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Ծնողական ժողովների ժամանակ քննարկվում են դասարանի ուսումնադաստիարակչական գործընթացի խնդիրները, պլանավորում և մշակվում են այդ գործընթացի կազմակերպման ձևերը, որոշվում դպրոցի և ծնողների համագործակցության ուղղությունները, ամփոփվում տարվա աշխատանքի արդյունքները, լուծվում են առաջացած խնդիրները:

Ծնողական ժողովներին սովորաբար հանդիպում են ուսումնական գործընթացին մասնակցող երկու կողմերը՝ մանկավարժներն ու ծնողները, որպեսզի լսեն միմյանց և քննարկեն երրորդ կողմի ՝ երեխաների հիմնական խնդիրները: Ուսումնական տարվա ընթացքում հանաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդի և դասղեկի նախաձեռնությամբ՝ կարող են հրավիրվել նաև արտահերթ դասարանական ծնողական ժողովներ:

Ծնողական ժողովները կարող են լինել՝

- Կազմակերպչական
- Թեմատիկ
- Համադպրոցական կամ դասարանական
- Ամփոփիչ:

Ծնողական ժողովների ընթացքում առաջին հերթին հարկավոր է ստանալ այնպիսի տեղեկություններ որոնք անհրաժեշտ են երեխաների հետ աշխատելիս: Հայտնի է, որ ով գիտի կարևոր տեղեկություններ երեխաների մասին, նա էլ տիրապետում է դաստիրակչական իրավիճակին: Դասղեկի համար այդպիսի տեղեկությունները նրա մասնագիտական հարստությունն են, որոշումներ ընդունելու հիմքը: Այդ առումով ցանկացած ժողովի համար անհրաժեշտ է նախապատրաստել ծնողներին տրվող հարցեր: Ծնողական ժողովների ժամանակ ուսուցիչը պետք է ունենա հստակ սահմանված օրակարգ, որի համաձայն պետք է անցկացնի այն:

Ծնողական ժողովը անցկացնելիս պետք է հաշվի առնել որոշ մանրունքներ: Ծնողական ժողովները պետք է անցնեն դրական մթնոլորտում, ծնողներն իրենց ազատ զգան, չկոմպլեքսավորվեն: Ցանկալի է նստեն շրջանաձև, որպեսզի ազատ հաղորդակցվեն և տեսնեն միմյանց: Ծնողական ժողովը պետք է լինի հետաքրքիր, ուսուցողական: Չպետք է տևի մեկ ու կես ժամից ավելի:

Ժողովն անցկացնող դասղեկը պետք է ունենա մանկավարժական մեծ տակտի զգացում: Խոսի խնդիրների մասին, բայց չառանձնացնի, չշեշտի որևէ աշակերտի անուն կամ ազգանուն: Քննարկվող խնդիրը պետք է ընդհանրացնի: Իսկ եթե կա այնպիսի ծնող ,որ ուսուցիչը անպայման պետք է խոսի այդ ծնողի հետ նրա երեխայի խնդիրների մասին, պետք է նրա հետ առանձին խոսի:

Ցանկացած երեխա անհատականություն է: Չկա վատ երեխա: Կա վատ դաստիարակություն: Նկատողություն անելուց առաջ պետք է խոսել այդ երեխայի լավ կողմերի մասին, գովել, այնուհետև անցում կատարել քննարկվող հարցին: Ցանկացած ծնող, ինչի համար էլ դպրոց եկած լինի, ինչպիսի երեխայի ծնող էլ լինի, պետք է դպրոցից հեռանա ժպտալով: Նա պետք է գիտակցի, որ ուսուցիչը ոչ թե իր թշնամին է, այլ համախոհը: Պատրաստ է նրան օգնել ու աջակցել իր երեխայի դաստիարակության հարցում:

Կարելի է յուրաքանչյուր ծնողի համար օր նշանակել, որ ամեն ամսվա այդ օրը լինի իր այցելության օրը: Ծնողը դպրոց գա, զրուցի բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչների հետ, իմանա իր երեխայի թերությունները, խնդիրները, գնահատականները և այլն: Այդպես ծնողն իրեն ավելի ազատ կզգա, ազատ կխոսի ուսուցիչների հետ՝ չամաչելով մյուս ծնողներից: Իսկ այդ դեպքում ծնողական ժողովներն ուրիշ բնույթ կստանան: Կանցկացվեն ավելի լավ մթնոլորտում, կքննարկվեն ավելի գլոբալ հարցեր և կստանան իրենց սպառիչ պատասխանները: Կարելի է ծնողների հետ կազմակերպել նաև խմբային աշխատանքներ: Այդ միջոցով ծնողները կշփվեն իրար հետ և ավելի լավ կճանաչեն միմյանց: Այսուհանդերձ, այս համագործակցության շրջանակներում հնարավոր են նաև կոնֆլիկտներ, անհամաձայնություններ, որոնք կարող են վնաս բերել բուն ուսումնական գործընթացին, մտցնել լարվածություն: Ուստի շատ կարևոր է երկուստեք պահպանել բարեվարքության կանոնները, լսել խնդիրն ու բերել հիմնավոր փաստարկներ, չառաջնորդվել բացառապես սեփական շահով: Լարվածությունը, կոնֆլիկտների անկառավարելիությունը, անշուշտ, այս գործընթացում տեղ չունեն: Կողմերը երկուստեք պետք է գիտակցեն, որ քննարկումն ու բացասական կողմերի մատնանշումն ուղղված է ոչ թե իրենց իրավունքների կամ արժանապատվության ոտնահարմանը, այլև հիմնախնդրի բարձրաձայնմանն ու հնարավոր լուծումներ գտնելուն: Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողն ավելի է հասկանում սեփական երեխային՝ մեծ ուշադրություն հատկացնելով

երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին: Ուսուցչի հետ համագործակցության արդյունքում ծնողը սկսում է վերանայել իր պահվածքն ու փորձում երեխայի հետ հարաբերություններում լինել ավելի արդարամիտ, ազնիվ, հարմարվող ու հանդուրժող:

Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա

Ընտանիքը, որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր են երեխայի բնականոն զարգացման համար: Սա այն միջավայրն է, որտեղ ծնվում ու աշխարհաճանաչողության սկզբնական քայլերն է անում մանուկը, պատանին դեռահասը, ուստի ծնողի, ընտանեկան միջավայրի ուղիղ ներգործությունը ողջ կյանքի վրա ունենում է մեծ ազդեցություն: Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր):

Կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-դպրոց համագործակցության ակունքում: Այս մասով իր կարևոր դերակատարումն ունի ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժը: Սոցիալական մանկավարժը, համագործակցելով բազմամասնագիտական խմբի մյուս մասնգետների հետ, ուսումնասիրում է սովորողների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը սովորողի վրա, նրանց

սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակը, դուրս է բերում կարիքները և դրանց համապատասխան կազմում է միջամտության պլան, որը ներառում է կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները, ժամկետները, պատասխանատուներին :

Որպեսզի դաստիարակչական գործընթացն ընտանիքում անցնի արդյունավետ, հարկավոր է, որ ծնողներն առաջին հերթին բացառեն որևէ բռնություն, վատ կամ բացասական ներգործություն երեխայի վրա: Սա կարող է կազմաքանդել սովորողի բնականոն հոգեկան զարգացումն ու անդառնալի հետևանքներ ունենալ: Դաստիարակության գործում միշտ, այսօր առավելապես, կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի ճիշտ դրսևորուները: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար: Հակառակ դեպքում մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո բացակայությունը հանգեցնում են ատելության, արհամարանքի՝ ծանրացնելով թե' երեխայի, թե' ծնողի կյանքը: Այսօր դպրոցում լրջագույն խնդիրներ են առաջանում՝ կապված ծնողների որոշ մասի ինքնադաստիարակության հարցերի հետ, ուստի սովորողների հետ ունեցած որոշակի դժվարությունների հիմնական դրդապատճառները կարելի է փնտրել հենց ծնողների մեջ: Կարգապահության լավագույն դպրոցը հենց ընտանիքն է, որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է: Իսկ երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ: Ուստի, ընտանեկան դաստիարակության շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել մեծերին, բարեվարք պահել շրջապատում: Առանց ընտանեկան ճիշտ դաստիարակության դպրոցում սովորողին կառավարելն ու վերահսկելը անչափ դժվար է ուսուցչի համար: Այն ծնողներն են շահում, ովքեր երեխաների դաստիարակությունն իրականացնելիս ամեն ինչի չափը դարձնում են սովորույթ, բնավորության գիծ, ամենօրյա կանոն: Ծնողները դասղեկի, ուսուցիչների անմիջական օգնությանմբ պարտավոր են սիրո զգացմունքներ դաստիարակել: Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխայի համար, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, բարուց ու չարից, լավ ու վատից, հասարկությունից, արժեքներից, հայրենիքից, ծնողից, տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կփոխանցի իր երեխային: Եթե ծնողը չի պատկերացնում սեփական երեխայի ուսումնական

հարցերում իր կարևոր դերակատարումը, ապա հարկավոր է, որ ուսուցիչը սկսի հենց այդ կետից՝ ծնողին բերել համագործակցային դաշտ:

Ընտանիքի և դպրոցի փոխներգործությունն ու համագործակցությունը

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց ու երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիրակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այս երկու կողմերի համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիրակներն են, հետևաբար դաստիրակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիրակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիրակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Ծնողների և ուսուցիչների համագործակցությունը ենթադրում է նաև երեխային ներկայացվող միասնական պահանջների, նրա զարգացման ծրագրերի և մեթոդիկաների մշակում:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիրակության գործընթացում: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիրակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում: Իսկ դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են: Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիրակության գործընթացի հետ Ուսուցիչները պետք է նկատի ունենան, որ ծնողները պատրաստ են քննարկել բոլոր այն հարցերը, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները:

Դասվարը ծնողներին ներգրավում է դպրոցի նախագծային ամենատարբեր աշխատանքներում, խրախուսում է մասնակցությունը միջոցառումներին: Ուսուցիչների, դասավանդողների կարևորագույն խնդիրներից են ընտանիքի միասնության ու համախմբվածության նախադրյալների ստեղծումը, ծնողների և երեխաների փոխըմբռնման մթնոլորտի, ընտանիքում երեխաների համար հարմարավետ միջավայրի նախապատրաստումը, նրանց համատեղ գործունեության և շփման հմտությունների ձևավորումը: Այդ կապակցությամբ նպատակահարմար է ծնողների և երեխաների համատեղ ստեղծագործական, տեխնոլոգիական աշխատանքների կազմակերպումը:

Ծնողների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման, կրթական նպատակների իրականացման և երեխաների կրթության առավել նպաստավոր պայմանների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալ է:

Ճիշտ եմ համարում ծնողի կապը հոգեբանի, սոցիալական մանկավարժի հետ: Հոգեբանը կամ սոցիալական մանկավարժը կարող են օգնել՝ որոշելու ծնողների հետ համագործակցության նպատակը: Հատկապես հենց նրանք են տիրապետում այնպիսի տեղեկույթների, որոնք երբեք չեն ձեռքբերվուում հարցման միջոցով: Ակնհայտ է, որ դժվար է դպրոցում իրականացնել յուրաքանչյուր երեխայի ծնողի հետ փոխներգործությունն ու համագործակցությունն իրենց մեջ ներառող հիմնախնդիրների ամբողջ ծավալով: Սակայն հարկավոր է հոգեբանամանկավարժական ուղեկցությունը կազմակերպել այնպես, որ երեխան օգնություն և փոխըմբռնում որոնի ընտանիքում: Այդպիսի ծառայության նպատակը, թերևս, երեխաների կրթության, դաստիրակության և զարգացման նպաստավոր պայմանների ապահովումն է, իսկ ամենակարոևր պայմաններից մեկը, անշուշտ, դպրոցի ու ընտանիքի համագործակցությունն է: Ծնողների խորհրդատվության կազմակերպումը դպրոցում ունի իր առանձնահատկությունները: Մի կողմից այն խիստ անհատական է, մյուս կողմից էլ անհրաժեշտ է հետևել ծնողների և երեխաների դժվարություններին, որպեսզի մանկավարժական շտկողական գործունեությունը չլինի ժամանակավրեպ: Գաղտնիք չէ, որ երեխաների ծնողները սովորաբար զբաղված մարդիկ են: Ուստի խիստ կարևոր է, որ խորհրդատվությունը կազմակերպվի նաև ծնողներին հարմար ժամերի, որպեսզի հնարավորություն ունենան միաժամանակ այլ խնդիրներ լուծել: Ծնողները պատասխանատվություն են կրում դպրոցական տարիքի երեխաների կրթության համար: Իսկ պետությունը պարտավոր է որդեգրել մի այնպիսի կրթական համակարգ, որը կապահովի մարդու ամբողջ կյանքի ուսումնառությունը և անձնական զարգացման համար անհրաժեշտ հիմքեր:

Ընտանիքում երեխաները նույնպես ունեն իրենց պարտականությունները և պատասխանատվությունը: Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՛ ընտանիքներում, և՛ դպրոցներում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիրակություն: Ո՛չ ծնողները, ո՛չ ուսուցիչները չեն կարող մեկուսացված փոխանցել այն բոլոր գիտելիքները, հմտությունները և արժեքները, որոնք անհրաժեշտ են երիտասարդներին՝ հասարակության մեջ պատշաճ կերպով ինտեգրվելու համար: Ուսուցիչ-ծնող ճիշտ փոխհարաբերությունները նպաստում են անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և անհատի արժեքային համակարգի ձևավորմանը: Հենց առաջին օրերից ամուր հիմքի վրա պետք է լինի ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը. իրապես հարգելով և վստահելով ուսուցչին՝ ծնողը երեխայի մեջ հարգանք պիտի սերմանի դպրոցի և կրթության նկատմամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, կրթական համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, սովորողների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Իսկ ծնողները, առաջնային համարելով սեփական երեխայի լավ ու որակյալ կրթությունը, պետք է մշտապես համագործակցեն դպրոցի ուսուցիչների հետ:

Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում. նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն նաև ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց - ընտանիք համագործակցությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իմ աշխատանքային երկարատև փորձի հիման վրա եզրակացրել եմ, որ շատ դեպքերում ծնողը անտեղյակ է իր երեխայից, չգիտի նախասիրությունները, չի ստուգում դասերին պատրաստվածությունը: Այս ծնողների երեխաներն էլ չունեն հստակ նպատակներ և իմիջիայլոց են վերաբերվում կրթությանը: Կան ծնողներ, ովքեր ամենայն ճշտությամբ տեղյակ են իրենց երեխայի նախասիրություններին և յուրահատկություններին: Այս ծնողների երեխաները ավելի շատ են կարևորություն տալիս կրթությանը և ավելի պատրաստված են գալիս դպրոց: Նաև դրսևորում են ավելի լավ վարք: Հիմնվելով իմ փորձի և հետազոտության ընթացքում կատարած պնդումների վրա՝ եկել եմ հետևյալ եզրահանգումներին..

- Ուսուցիչը շատ կարևոր դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողների ծնողների հետ կառուցողական ու բարենպաստ հարաբերություններ հաստատելու առումով:

- Ընտանիքի և դպրոցի փոխգործունեության ձևերը հնարավորություն են տալիս կողմերին առողջ բանակցային հարաբերություններ ստեղծել՝ ունենալով ընդհանուր նպատակներ ու մղումներ:
- Ուսուցիչի սերտ համագործակցությունը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ կարող է լուծել կրթական մի շարք հիմնախնդիրներ:
- Ուսուցիչը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների համար պետք է ապահովի մանկավարժական խորհրդատվություն:
- Ուսուցիչն ու ծնողը պարտավոր են միմյանց տեղյակ պահել սովորողի խնդիրների մասին ու համատեղ փորձեն ելքեր գտնել:
- Ուսուցիչն ու սովորողի ծնողը պետք է փոխադարձաբար հարգեն միմյանց՝ հաշվի նստելով քաղաքավարության կանոնների ու էթիկայի նորմերի հետ:
- Ուսուցիչը պետք է իրականացնի ծնողական ժողովներ՝ նպատակ ունենալով քննարկել առկա խնդիրները:
- Մանկավարժական կոլեկտիվը ծնողների հետ համագործակցության հարցում պետք է միասնական մոտեցումներ ցուցաբերի՝ ի շահ սովորողի:
- Շատ կարևոր են մարդկային որակները, ուստի երկուստեք հարկավոր է լինել հանդուրժող և արդարամիտ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, <<Մանկավարժություն>>, Երևան, 2005
- Կ.Դ Ուշինսկու մանկավարժական հայացքները
- www.arlis.am
- ՀՀ ընտանեկան օրենսգիրք
- ՀՀ Հանրակրթության մասին օրենք
- www.escs.am Ա. Պետրոսյան, <<Դասղեկի աշխատանքի կազմակերպումը դպրոցում>>
- www.ysu.am <<Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում>>, Երևան, 2016
- www.lib.armedu.am